ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ԱՐՏՈՒՐԻ ՄԱՆԹՐՈՍՅԱՆ

ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

(դատաիրավական տեքստերի նյութի հիման վրա)

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	բ.գ.թ. դոցենտ Ն. Ս. Հովհաննիսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բ.գ.դ. դոցենտ Ն. Լ. Հարությունյան բ.գ.թ. Տ. Բ. Միքայելյան
Առաջատար կազմակերպություն՝	Եվրասիա միջազգային համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հուլիսի 3-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հունիսի 1-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բ.գ.դ., պրոֆեսոր
Ե. Լ. Երզնկյան

Վերջին տասնամյակներում ընդգծված ուշադրություն է հատկացվում պատճառականության կարգի առկայացման միջոցներին, հատկապես՝ լեզվաբանական գիտակարգերում: Այն, թե ինչ միջոցներով է լեզուն արտահայտում պատճառի իմաստը, այժմ ուսումնասիրության առարկա է այնպիսի գիտակարգերի համար, ինչպիսիք են իմաստաբանությունը, գործաբանությունը, տեսական քերականությունը: Լեզվաբանական հարացույցում պատճառականության կարգի առկայացման միջոցները տակավին համալիր ուսումնասիրության կարիք ունեն՝ հաշվի առնելով պատճառականության՝ որպես լեզվական և/կամ լեզվաբանական կարգի բազմաշերտ գործառական դաշտը:

Այս համատեքստում սույն ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է դատաիրավական տեքստի քննության ոլորտում պատճառականության կարգի ներկայիս քերականական տեսությունների համակարգված կիրառության բացակայությամբ, պատճառականության կարգի բառաքերականական միջոցների և պատճառական փոխակարգության իմաստաբանական առանձնահատկությունների ընդարձակ դաշտով, ինչպես նաև իմաստաբանական փորձագիտության գործիքակազմի համալրման կարիքով:

Սույն ատենախոսության **գիտական նորույթը** պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին անգամ պատճառի ուսումնասիրությունների երեք հիմնական ուղղությունները՝ պատճառումը, պատճառայնությունը և պատճառականությունը, դիտարկվում են դատաիրավական խոսույթի լեզվական տարբեր մակարդակներում: Առաջարկվում է նոր եզրաբանական հենք և գործիքակազմ, որոնք կնպաստեն պատճառականության ուսումնասիրությունների հետագա զարգացմանը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դատաիմաստաբանությունը և լեզվաբանական փորձագիտությունը:

Ատենախոսության մեջ փորձ է արվում երևան հանել պատճառականության ճանաչողական այն հիմնարար գործառույթը, որը պայմանավորում է դատաիրավական նշանակություն ունեցող երևույթների նկատմամբ հանրային ընկալումները: Ավելին, վեր է հանվում պատճառականության և մերժողականության խոսույթային ռազմավարությունների, ինչպես նաև դատաիրավական խոսույթում տեքստակառուցման և պատճառականության միջն կապը:

Աշխատության **տեսական նշանակությունը** հիմնվում է ստացված տվյալների բազմաշերտության վրա, որը թույլ է տալիս նորովի գնահատել, մեկնաբանել և դասակարգել պատճառականության կարգի առկայացման միջոցները ժամանակակից անգլերենում: Աշխատանքի տեսական արդյունք կարելի է համարել նաև ստեղծված համատեքստը, որը հնարավոր է դարձնում ուսումնասիրել լեզվի պատճառական վարքագիծը ժամանակակից

անգլերենում (հայերենի զուգադրությամբ) իմաստաբանական փորձագիտության դիրքերից:

Ի տարբերություն պատճառականության կարգի մինչ օրս կատարված ուսումնասիրությունների՝ տվյալ ատենախոսությունը կարևորվում է **գործնական նշանակության** առումով, քանի որ այն հիմնվում է միանգամից մի քանի գիտակարգերի տվյալների վրա և վեր է հանում դատաիրավական տեքստում բայական կարգերի իմաստաբանական քննության անհրաժեշտությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել քրեական գործի քննության, ինչպես նաև դատաիրավական նշանակության տեքստի վերլուծության գործիքակազմի համալրման համար: Այս առումով ստացված արդյունքները կիրառելի են ոչ միայն անգլալեզու, այլ նաև հայալեզու դատաիրավական տեքստերում: Աշխատանքում պատճառականության կարգի և պատճառական փոխակարգության ժամանակակից տեսություններն ու առաջարկվող նոր հայեցակերպերը կարող են դասավանդման նյութ դառնալ լեզվաբանության, իմաստաբանության, լեզվաբանական փորձագիտության դասընթացներում: Ավելին՝ կենսազրկության իմաստ արտահայտող բայերի, ինչպես նաև պատճառական փոխակարգության ենթարկվող այլ բայական կարգերի՝ աշխատության մեջ կատարված իմաստաբանական վերլուծությունը եզրաբանության վերանայման և նոր եզրաբանության մշակման առումով կիրառական նշանակություն կարող է ունենալ բառարանագրության և դատաիրավական խոսույթի ոլորտներում:

Ատենախոսության ուսումնասիրության **առարկա** են պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միջոցները, մասնավորապես՝ պատճառական փոխակարգության ենթարկվող, վիճակի փոփոխության և կենսազրկության իմաստ արտահայտող բայերը դատաիրավական նշանակության տեքստերում:

Հաշվի առնելով ուսումնասիրվող առարկայի բազմաշերտությունը և բազմագործառութայնությունը, ինչպես նաև դատաիրավական խոսույթի ընդգրկունությունը՝ որպես նյութ են ընտրվել կենսազրկության իմաստ արտահայտող բայերն անգլերենում (հայերենի զուգադրությամբ) ընդհանուր առմամբ, ապա նշյալ բայերը ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող մինչնախագահական և նախագահական ապրիլքսանչորսյան ելույթներում, ինչպես նաև «Ժողովուրդն ընդդեմ Օ. Ջ. Սիմփսոնի» քրեական գործի քննության ընթացքում ներկայացված՝ դատախազի և պաշտպանյալ կողմի բացման և փակման խոսքի տեքստերում: Պատճառական բնույթ ունեցող բայերն այնուհետև քննվում են «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» քրեական գործի բացման խոսքի, ինչպես նաև «ԱՄՆ-ն ընդդեմ Ռուդի Սոթոյի և Նիքոլ Ֆիշերի» քրեական գործի ամբաստանագրի տեքստերում:

Ատենախոսության հիմնական **նպատակն** է վեր հանել և նկարագրել պատճառականության կարգի առկայացման գործիքակազմը և դրա առանձնահատկությունները ժամանակակից անգլալեզու դատաիրավական նշանակության տեքստերում:

Վերոնշյալ նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- ի մի բերել և վերամեկնաբանել պատճառականության ժամանակակից տեսությունները,
- քննել պատճառական փոխակարգության ենթարկվող բայերի իմաստային այն առանձնահատկությունները, որոնք հնարավոր են դարձնում փոխակարգելիությունը,
- ուսումնասիրել դատաիրավականության գործաբանական և խոսութային առանձնահատկությունները, այդ խոսույթում անհատի լեզվական արտապատկերման եղանակները,
- դիտարկել և վեր հանել պատճառականության և դատաիրավականության հանրային ընկալումների փոխներգործությունը,
- վերլուծել ժամանակակից անգլերենում կենսազրկության իմաստ արտահայտող բայերի հասկացական կաղապարները՝ արևելահայերենի զուգադրությամբ,
- քննել պատճառականության դերը մերժողականության խոսույթային մարտավարությունների համատեքստում,
- դիտարկել հակա/պատճառական բայերի կիրառման առանձնահատկությունները դատաիրավական նշանակության տեքստում՝ որպես հանցանքի լեզվական շարադրանքի հիմնական լծակ:

Վերոբերյալն է պայմանավորում հետազոտության **մեթոդաբանական** հիմքը: Կախված առաջադրված խնդիրներից՝ հետազոտության մեթոդները ներառում են ժամանակակից անգլերենում պատճառական փոխակարգության ենթարկվող բայերի իմաստային առանձնահատկությունների վերլուծություն՝ հարացուցային և շարակարգային մոտեցումներով, կենսազրկության իմաստ արտահայտող բայերի բառահասկացույթային կաղապարի իմաստային բաղադրիչների վերլուծություն: Բառահասկացույթային կաղապարների վերլուծությունը աշխատանքում փորձարկվում է ձեռնածական խոսույթի վերլուծության համատեքստում: Աշխատանքի վերջին հատվածում գործադրվում է դերանվանական տարափոխության և բայի ներկայացման միջոցը, որի հիմքում Ֆիլմորյան ֆրեյմային իմաստաաստաբանության տեսությունն է: Այստեղ գործածվել է էլեկտրոնային «Framenet» տվյալների բազան, որը կիրառելի է բառային միավորի արտահայտած տեղեկատվությունը ստանալու, իրադարձությունը ճանաչելու, հասկացական կաղապարը կազմող դերակատարներին բացահայտելու համար: Փաստորեն՝ աշխատության մեջ օգտագործվել է կառուցվածքային լեզվաբանության մեթոդաբանության մի

համախումբ, որը դատաիրավական տեքստի հեղինակին բացահայտելու տեսանկյունից կարող է կիրառելի լինել նաև քրեական գործի լեզվափորձագիտության ընթացքում:

Պաշտպանության են հանվում հետևյալ դրույթները

1. Վիճակի փոփոխություն ցույց տվող բայերն ունեն ընդհանուր իրադրային կառուցվածք, մինչդեռ տարբերվում են բառային կորիզի տեսանկյունից: Բառային կորիզը պարունակում է յուրահատուկ իմաստ, որը և պայմանավորում է վիճակի փոփոխություն ցույց տվող բայի քերականական փոխակարգելիությունը:

2. Այն բայերը, որոնք ենթարկվում են պատճառական փոխակարգության, իմաստաբանական տեսանկյունից ունեն կայուն հիմք (վիճակի փոփոխություն ցույց տվող ոչ ագենտային բայերի պարագայում), իսկ վիճակի փոփոխություն ցույց տվող անհայցական բայերն ինքնին պատճառական են:

3. Ինստիտուցիոնալ խոսույթում իրադարձությունների հաջորդականությունը միավորելու և դատաիրավական շարադրանքի վերածելու գործընթացը ղեկավարվում է կապակցման երկու սկզբունքներով՝ ժամանակագրական կարգով և պատճառականությամբ:

4. Պատճառականության կարգը դատաիրավական տեքստում դիտարկելի է երկու հարթության վրա, որոնք նշանակելու համար ներմուծվում են մակրո- և միկրոպատճառականություն եզրույթները: Հենց դրանց միջոցով են տարանջատվում դատաիրավական տեքստում պատճառականության կարգի երկու մակարդակները: «Սպանություն» երևույթը դիտարկվում է որպես ***մակրոիրադարձություն***, իսկ հայցի մեջ կամ այդ հանցագործությունը դատարանում ներկայացնող այլ տեքստերում առկա բառային միավորները ***միկրոիրադարձություններ***:

5. Իրական աշխարհում տեղի ունեցած յուրաքանչյուր իրադարձություն պատճառականության միջոցով տեղայնացվում է որոշակի աստիճանակարգում՝ E→T→N, որտեղ E-ն այն իրադարձությունն է, որը տեղի է ունեցել իրական աշխարհում, T-ն այն տեքստն է կամ տեքստերը, որոնք այդ իրադարձությունը նկարագրում են դատարանում կամ դատաիրավական նշանակություն ունեցող փաստաթղթերում, իսկ N-ով նշվում է այն իրավական նորմը, որին վերագրվում է E իրադարձությունը: Նկարագրության և վերագրման այս մակարդակներն ամբողջությամբ հիմնվում են պատճառական կապերի վերհանման և հստակեցման վրա:

6. Իրավունքի, հանցանքի կամ դատաիրավական ոլորտի մի շարք այլ երևույթների նկատմամբ հանրային ընկալումները կամ վերաբերմունքը պայմանավորվում են բառային միավորի բառահասկացույթային կաղապարի առանձնահատկություններով: Այս հանգամանքը դիտարկելի է անգլերենում (արևելահայերենի զուգադրությամբ) կենսազրկության իմաստ արտահայտող

բառային միավորների քանակական և գործառական առանձնահատկությունների իմաստաբանական քննության լույսի ներքո:

7. Դատաիրավական նշանակության տեքստերում ցեղասպանության և կենսազրկության իմաստ արտահայտող պատճառական բառային միավորների ընտրության հիմքում հեղինակի ձեռնածական այն միջոցներն են, որոնք կիրառվում են **բառային, քերականական, իմաստային** մակարդակներում՝ Հայոց ցեղասպանության մերժողական խոսույթի ստեղծման համար:

8. Նախադեպային դատաիրավական համակարգում քրեական գործի քննության բացման և փակման խոսքի, ինչպես նաև ամբաստանագրի տեքստերում պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միավորները գործի են դրվում որպես մեղադրյալի լեզվական արտապատկերման միջոց:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և ծանոթագրություններից:

Ներածության մեջ ուրվագծվում է խնդրո առարկան և հետազոտության ընթացքը:

Առաջին գլխում ներկայացվում են պատճառականության տեսական հայեցակերպերը՝ ըստ Մ. Հասպելմաթի, Բ. Լևինի, Մ. Շիբաթանիի, Ա. Խոլոդովիչի, Բ. Քոմրիի, Ր. Դիքսոնի, Ջ. Սոնգի, Լ. Թալմիի, Ր. Մանզինիի, Մ. Բեյքերի, Թ. Ռայնհարթի, Լ. Բուրցոյի, Գ. Չերչիայի, Դ. Պեսեցկիի և այլոց աշխատանքների: Այնուհետև փորձ է արվում ներկայացնելու այն գլխավոր առանձնահատկությունները, որոնք բնորոշում են պատճառական փոխակարգությունը, ինչպես նաև այդ առանձնահատկությունների շուրջ ծավալվող հիմնական տեսությունները: Այստեղ պարզվում է, որ շարահյուսական մակարդակում հակապատճառականները անհայցական պրեդիկատներ են: Իմաստաբանական տեսանկյունից այն բայերը, որոնք ենթարկվում են պատճառական փոխակարգության, ունեն կայուն հիմք (վիճակի փոփոխություն ցույց տվող ոչ ագենտային բայերի պարագայում):

Ընդհանուր առմամբ, առաջին գլխում ներկայացվում են նաև պատճառական փոխակարգության, պատճառականացման, ինչպես նաև անանցողականացման երևույթները, որոնք առաջադրվել են բառագիտական և շարահյուսական ուսումնասիրություններում: Փորձ է արվում նաև վեր հանել այն բոլոր առանձնահատկությունները, համաձայն որոնց կարելի է ենթադրել, որ վիճակի փոփոխություն ցույց տվող անհայցական բայերն ինքնին պատճառական են:

Երկրորդ գլխում ձևակերպվում է անհատի լեզվական արտապատկերումը դատաիրավական տեքստում: Այստեղ քննվում են այն եղանակները, որոնք պայմանավորում են անհատի լեզվական վերարտադրության դերը քրեական գործի քննության ընթացքում: Դատաիրավական

տեքստը դիտարկվում է լեզվագործաբանության և իմաստաբանության դիրքերից, ներմուծվում են մակրո և միկրոպատճառականության գաղափարները, որոնք նշում են որոշակի իրադարձության պատճառական բնույթի երկու շերտերը: Այստեղ հատուկ շեշտադրվում են ձևի և հետևանքային բայերի քերականական նրբերանգները: Քննարկվում է նաև իրադարձությունների համընթացությունը՝ որպես պատճառակերտ միջոց:

Երրորդ գլխում քննվում են պատճառականության կարգի առկայացման բառաքերականական դրսևորումները և դրանց գործառական դաշտը դատաիրավական տեքստում: Նախ՝ ուսումնասիրվում են ժամանակակից անգլերենում կենսազրկության իմաստ արտահայտող բայերը (արևելահայերենի զուգադրությամբ), որոնց քանակական և գործառական առանձնահատկությունները նշյալ լեզուներում թույլ են տալիս եզրակացնել, որ իրավունքի, հանցանքի կամ դատաիրավական ոլորտի այլ երևույթների նկատմամբ հանրային ընկալումները կամ վերաբերմունքը պայմանավորվում են բառային միավորի բառահասկացութային կաղապարի առանձնահատկություններով: Այնուհետև, Բ. Օբամայի մինչնախագահական և նախագահական ապրիլքսանչորսյան ելույթներում «ցեղասպանություն» իրադարձությունն արտահայտող բառային միջոցների իմաստային կառուցվածքը քննելիս հնարավոր է դառնում երևան բերել ժխտողականության այն բոլոր եղանակները, որոնք կիրառվում են ԱՄՆ ներկայիս նախագահի կողմից: Դատաիրավական տեքստում պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միջոցների վերլուծությունը կատարվում է նաև Օ. Ջ. Սիմփսոնի քրեական գործի բացման և փակման, ինչպես նաև «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» քրեական գործի բացման խոսքի տեքստի հիման վրա: Բացման և փակման խոսքի տեքստերում անձնական դերանունների տարափոխության և այդ դերանուններին վերագրված գործողությունների տեսակների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պատճառականության կարգը, իր առկայացման բառաքերականական միջոցներով հանդերձ, ընկած է հեղինակի խոսույթային մեխանիզմների հիմքում և խաղարկվում է հեղինակի կողմից որպես իրադրայնության մասնակիցների լեզվական վերարտադրության միջոց:

Վերլուծելով Բ. Օբամայի մինչնախագահական և նախագահական ապրիլքսանչորսյան ելույթներում «ցեղասպանություն» իրադարձությունն արտահայտող բառային միջոցների իմաստային կառուցվածքը՝ հնարավոր է դառնում վերհանել ժխտողականության այն բոլոր եղանակները, որոնք կիրառվում են ԱՄՆ ներկայիս նախագահի կողմից:

Այսպես՝

(1) «The Armenian *Genocide*, carried out *by* the Ottoman Empire from 1915 to 1923, resulted in the *deport*ation of nearly 2 million Armenians, and approximately 1.5 million of those deported were killed.»[1]

Վերոբերյալ օրինակում հստակ երևում են և՛ շարադասական, և՛ իմաստաբանական ագենտները. վերջիններիս հստակությունը կախված է *by* մասնիկից, որը կամրջում է ագենտները (the Ottoman Empire) երկու հարթության վրա: Ավելին, ԱՄՆ ապագա նախագահն այստեղ օգտագործում է «ցեղասպանություն» բառը, վերագրում է այն Օսմանյան կայսրությանը և հստակեցնում ժամանակահատվածը և միջոցները (տեղահանում): Հատկանշականն այն է, որ անգլերենում պատճառական *deport* (տեղահանել) բայիմաստում պատճառիչ արգումենտը չի կարող լինել մարդ-անհատ, այլ պետություն, պետական մարմին.

DEPORT: [[x (պետություն, կառավարություն) ԳՈՐԾԵԼ <ՁԵՎ (բռնի ուժով)>] ՊԱՏՃԱՌԵԼ [y ԴԱՌՆԱԼ <ԲԱՑԱԿԱ>]]:

Փաստորեն, *deport* բայի պատճառիչ արգումենտը վերոբերյալ օրինակում դարձյալ և՛ շարահյուսական, և՛ իմաստային մակարդակներում Օսմանյան կայսրությունն է, որի՝ բռնի ուժի կիրառմամբ գործողությունը պատճառ է հանդիսացել պատճառյալ արգումենտի՝ ինչ-որ մի տարածքից բացակա լինելու/դառնալու համար: Ապագա նախագահը հաջորդիվ ընդգծում է ագենտի որպիսությունը՝

*«I criticized the Secretary of State two years ago for the firing of the U.S. Ambassador to Armenia, John Evans, after he used the term "**genocide**" to describe **Turkey's slaughter** of thousands of Armenians starting in 1915»*[2].

Օսմանյան կայսրություն ագենտն այստեղ մասնավորեցվում և վերածվում է ***Թուրքիայի***, իսկ ցեղասպանություն եզրը՝ տարածվում այն ամենի վրա, ինչ կատարել է Թուրքիան որոշակի ժամանակահատվածում որոշակի ժողովրդի՝ այս պարագայում հայերի նկատմամբ: Ապա նախագահը նաև արտահայտում է իր բացասական, քննադատական վերաբերմունքն առ այն, ինչ տեղի է ունեցել ցեղասպանությունը չժխտող ամերիկյան դեսպանի հետ՝ անուղղակիորեն դատապարտելով մերժողականության այդպիսի դրսևորումը (դեսպանին աշխատանքից ազատելը): Ավելին, այստեղ ցեղասպանությունը նույնականացվում է *սպանդին* (slaughter) կամ գուցե լրացվում դրանով՝ հաշվի առնելով վերջինիս իմաստային կառույցում «անխտիր» ածանցյալի առկայությունը: Այլ կերպ ասած՝ հեղինակը հստակ արտահայտում է իր անձնական դիրքորոշումը, դատապարտում «ցեղասպանություն»

[1] Հոկտեմբեր 31, 2008 թ, Բ. Օբամայի նախագահական քարոզարշավային ելույթ:
[2] Հոկտեմբեր 31, 2008 թ, Բ. Օբամայի նախագահական քարոզարշավային ելույթ:

իրադարձությունը, այնուհետև վեր է հանում իրադարձության հեղինակին և ընդգծում, որ ցեղասպանության ենթարկված խմբի անդամները սպանվել են ***անխտիր, դաժանաբար*** և ***մեծ թվով***: Սա կարող է ընդհանրացված ներկայացվել հետևյալ բանաձևում.

SLAUGHTER (ՍՊԱՆԴ): [[x ԳՈՐԾԵԼ <ՁԵՎ (դաժանաբար, անխտիր)] ՊԱՏՃԱՌԵԼ [y (մեծաքանակ) ԴԱՌՆԱԼ <ՄԱՀԱՑԱԾ>]], ընդ որում *x* ագենտի որոշակի կերպով (դաժանաբար, անխտիր) կատարած գործողությունը պատճառ է հանդիսանում *y* պատճառյալ արգումենտի վիճակային փոփոխությանը՝ մահացած դառնալուն:

Նախագահական քարոզարշավի տեքստերում «ցեղասպանություն» իրադարձությունը ներկայացնող բայերի իմաստային կառույցը, այսպիսով, ի հայտ է բերում երկու հիմնական օրինաչափություն՝ նախևառաջ հայոց ցեղասպանության ընդունումը և ապա՝ ցեղասպանության դատապարտումը:

Պատկերն առաջին հայացքից նույնն է նաև նախագահական ապրիլքսանչորսյան ելույթներում՝

> *«Today we commemorate the **Meds Yeghern** and honor those who **perished** in one of the worst **atrocities** of the 20th century. We recall the horror of **what happened** ninety-nine years ago, when 1.5 million Armenians were **massacred** or **marched to their deaths** in the final days of the Ottoman Empire, and we grieve for the **lives lost** and the suffering endured by **those men, women, and children**.»*[3]

Ակնառու տարբերություններից մեկը քարոզարշավային և արդեն նախագահական ելույթի միջև *«genocide»* բառի իսպառ բացակայությունն ու դրա փոխարինումն է հայերեն ***«Մեծ Եղեռն»*** (Meds Yeghern) բառակապակցությամբ:

Պատճառականության կարգի տեսանկյունից հետաքրքրական է այնպիսի բայերի և բայական արտահայտությունների կիրառումը, ինչպիսիք են, օրինակ, *perish, marched to their deaths, lives lost, suffering endured*: Ինչպես երևում է, այս արտահայտությունները զգուշորեն ընտրված են իրենց իմաստային կառույցում պատճառիչ արգումենտի բացակայության կամ աղոտ ներկայացվածության նկատառումներով: Օրինակ՝ *perish* բայը, որն ունի հիմնականում (եթե ոչ բացառապես) անանցողական կիրառում և, հետևաբար, բնույթով պատճառական համարվել չի կարող, քանի որ նկարագրում է գործընթաց, որը ենթական ապրում է բառիմաստի կառույցում: Այստեղ ենթական միաժամանակ և՛ գործողություն կատարողն է, և՛ գործողությանը ենթարկվող մասնակիցը՝ պացիենսը.

[3] https://www.whitehouse.gov/the-press-office/2014/04/24/statement-president-armenian-remembrance-day (16.04.2015)

Իրադարձություն: ՊԱՑԻԵՆՍ PERISH

↓ ↓

NP ենթակա բայ

[…] those, who perished […], ասել է, թե բայից բխող միակ մասնակիցը իմաբաստաբանական պացիենսն է, որն այս պարագայում վիճակի փոփոխությանը ենթարկվող անհատն է: Այն բայերը, որոնց խորքային իմաստը բխեցնում է որոշակի իրադրայնության համար ընդամենը մեկ մասնակից կոչվում են անանցողականներ: Այս անանցողականների իմաստային կառույցի մեջ վիճակի փոփոխության պարագայում ենթական կարող է հանդես գալ որպես պացիենս, իսկ այլ դեպքերում՝ նաև որպես ագենտ, թեմա, էքսպերիենսեր կամ ուրիշ հնարավոր իմաստային դերերում:

Թ. Գիվոնը *perish*-ի կարգին պատկանող բայերը դասում է ոչ ագենտային միջին սեռի բայերի դասին[4]: Ի տարբերություն այս դասին պատկանող *break* բայի (the glass broke-I broke the glass)՝ perish-ը պատճառական փոխակարգության չի ենթարկվում, այսինքն՝ *x perished y տեսակի արտահայտությունն անպատկերացնելի է: Պատճառականության կարգի առկայացման տեսանկյունից ակնհայտ է դառնում, որ խուսափողականության, մերժողականության, հանրային լեզվի աղճատման, մեղմասական և երկասական արտահայտությունների ընտրության հիմքում ընկած է պատճառիչի առկայության/բացակայության հանգամանքը:

Դիտարկենք պատճառականության ներկայացվածությունը նաև *«Ժողովուրդն ընդդեմ O. Ջ. Սիմփսոնի»* քրեական գործի՝ դատախազի բացման խոսքի տեքստում:

> «The other face that Nicole Brown **encountered** almost every day of her adult life, the face she **encountered** at the last moment of her adult life, the face that **encountered** Ronald Goldman during the last moments of his life.
> The evidence will show that the face you see, and the man **you will see**, is the face of a **batterer**, a **wife beater**, an **abuser**, a **controller**. You will **see** the face of Ron and Nicole's **murderer**. […]He **killed** her out of jealousy. **He killed her** because he couldn't **have her**. And if he couldn't

[4] Givon, T. *English Grammar: A Function-Based Introduction*. Vol. II. Amsterdam/Phildelphia: John Benjamins, 1993, էջ 76.

have her, he didn't want anybody else to **have** her. He **killed** her to **control** her»[5].

Ակնհայտորեն, դատախազական տեքստի շարադրանքի գործող անձինք այս հատվածում պատկերվում են՝ համաձայն որոշակի օրինաչափության: Նկատելի է, որ հեղինակն իր տեքստը կառուցում է երեք հիմնական գործող անձանց շուրջ՝ 1. Nicole Brown (NB) և Ronald Goldman (RG), 2. you և 3. the face՝

NB և RG -	you -	the face (he, O. J.)
↓	↓	↓
encounter every day	see (3*)	batter
encounter last minute		beat
encounter […]		abuse
		control
		murder
		kill

Դատախազն իր ելույթի կենտրոնում է տեղադրում երեք հիմնական գործող անձանց, որոնցից յուրաքանչյուրին վերագրում է գործողության որոշակի տեսակ: Զոհերի և կասկածյալ մարդասպանի հանդիպումների մասին խոսելիս դատախազը քանիցս կրկնում է *encounter* բառը, և կրկնությունը այստեղ պատահական չէ: Ըստ մեզ՝ *encounter* բայի շեշտադրումն այստեղ նախնառաջ պայմանավորված է տվյալ բայի իմաստային առանձնահատկություններով: Խնդիրն այն է, որ հայտնի ամերիկյան ֆուտբոլիստի համբավը կոտրելու համար անհրաժեշտություն է առաջանում, ըստ հեղինակի, զոհի և անօգնականի կարգավիճակում տեղադրել ֆուտբոլային աստղ դեռ կենդանի կնոջը: Նիքոլին անօգնական պատկերելու լավագույն միջոցն այստեղ *encounter* բայի կրկնությունն է, քանի որ այն պատկանում է պատճառականություն արտահայտող այն բայերի կարգին, որոնց իմաստաբանական ենթական հենց ազդյալ դերում է: Այս և այս հատվածում ուսումնասիրվող այլ բայերի իմաստային կառույցները ուսումնասիրելու համար օգտագործվում են հասկացական կաղապարների էլեկտրոնային բազայի առաջարկած տվյալները: Ուրեմն, *encounter* բայի կորիզում անհատները ինքնաշարժ արգումենտներ[6] են, որոնք հանդիպում են ակամա

---

[5] http://articles.latimes.com/1995-01-25/news/mn-24229_1_opening-statement (16.04.2015)

[6] Այստեղ ոչ թե փաստարկի, այլ իմաստաբանական դերի իմաստով:

(FrameNet), ընդ որում քերականորեն ավելի ընդգծված դերով է հանդես գալիս գործողության ենթական, որը հայտնվում է էքսպերիենսերի դերում, չի ղեկավարում իրադարձությունը և տեսանելի ազդեցության չի ենթարկվում: Էքսպերիենսերի դերում է նաև հայտնվում դուք-ը իրեն վերագրված *see* գործողությամբ: Փաստորեն, հեղինակի խոսույթում, հասցեատերը (հանդիսատես, դատարան) հայտնվում է նույն իմաստաբանական դերում, ինչ զոհը, այնինչ Սիմփսոնին, որը ներկայացվում երկիմաստ *the face*-ով, վերագրվում են այնպիսի արտակայորեն պատճառական իրադարձություններ, ինչպիսիք են *batter, beat, abuse, control, murder*. Դիտարկենք այս բայերի հասկացական կաղապարները:

Abuse բայի կաղապարում գործողություն կատարողը շարունակ վերաբերվում է գործողությանը ենթարկվողին դաժան և բռնի կերպով՝ ներառյալ ֆիզիկական վնաս կամ զոհին բռնի ուժով, իր կամքին հակառակ սեռական գործողության մեջ ներքաշելը: Զոհն այս դեպքում սովորաբար չի տիրապետում դիմադրելու կամ հակադարձելու ուժին[7]: Abusing-ի հասկացական կաղապարի բառային միավոր է նաև *batter-ը:*

Killing-ի հասկացական կաղապարից *murder* իրադարձության համար հիմնական են այնպիսի տարրեր, ինչպիսիք են պատճառը, գործիքը, մարդասպանը, միջոցը և զոհը: Հասկացական կաղապարում բավականին շեշտակի պատճառականությամբ է հանդես գալիս նաև *control* իրադարձությունը, որը ենթադրում է ղեկավարող անձ, իրավիճակ կամ փոփոխակ, որը գործողությունն իրականացնում է անձի, իրավիճակի կամ փոփոխակի նկատմամբ, ընդ որում տվյալ միավորը կամ դրա տարրերից մեկը ոչ թե ուղղակի ազդվում է, այլ ամբողջությամբ պայմանավորված է ղեկավարող տարրով:

Պատճառական բայերի բազմագործառույթային բնույթը դատախրավական տեքստում վեր հանելու նպատակով իմաստաբանական քննության ենթարկենք *«ԱՄՆ-ն ընդդեմ Ռուդի Սոթոյի և Նիքոլ Ֆիշերի»*[8] քրեական գործից մի հատված, որտեղ բողոքարկուն ներկայացնում է այն փաստերը, որոնք հանգեցրել են հանցագործություն համարվող իրադարձությանը: Այս հատվածը դատարան ներկայացվող բողոքի տեքստի կարևորագույն մասն է, որտեղ իրավական իմաստային լիցք ունեցող բառային միավորների միջոցով սովորաբար ներկայացված են հանցանքի բոլոր տարրերը:

---

[7] https://framenet2.icsi.berkeley.edu/fnReports/data/frameIndex.xml?frame=Encounter (09.02.2015)

[8] United States of America versus Rudy Soto, aka "Flaco" and Erin Nicole Fisher, Case 2;10-cr-01140-ODW, Document 1, Filed 09/25/10:

«[…] willfully and unlawfully **seized**, **confined**, **inveigled**, **decoyed**, **kidnapped**, **abducted**, and carried away […]»

Պատահական չէ, որ իրավական իմաստային լիցք ունեցող այս բառային միավորները կենտրոնացած են տեքստային հենց այս տիրույթում. այստեղ նկարագրվում է ամբողջ եղելությունը, և օգտագործվում է այնպիսի բառապաշար, որն ընթերցողին հղում է դեպի իրավական դաշտ՝ *inveigle*, *decoy*, ***abduct***: Իրավական նորմի և կատարվածի, ինչպես նաև բառով արտահայտված իրադարձության իմաստային կառույցում արգումենտների միջև պատճառահետևանքային կապը պարզաբանենք պրեդիկատաար-գումենտային կառույցների միջոցով՝ ըստ ԱՄՆ քրեական օրենսգրքով ամրագրված սահմանումների.

INVEIGLE: [[x ԳՈՐԾԵԼ <ՁԵՎ (խաբեությամբ, ապօրինի)>] ՊԱՏՃԱՌԵԼ [y ԳՈՐԾԵԼ, ԼԻՆԵԼ]][9],

DECOY: [[x ԳՈՐԾԵԼ <ՄԻՋՈՑ (խաբեություն, ձեռնածություն, գայթակղություն)>] ՊԱՏՃԱՌԵԼ [y ԳՈՐԾԵԼ]][10],

ABDUCT: [[x ԳՈՐԾԵԼ <ՄԻՋՈՑ (սպառնալիք, ուժ, կեղծիք)>] ՊԱՏՃԱՌԵԼ [y ԳՈՐԾԵԼ]][11],

KIDNAP: [[[x ԳՈՐԾԵԼ <ՁԵՎ (բռնի ուժով)> ՊԱՏՃԱՌԵԼ [y ԴԱՌՆԱԼ <ԲԱՑԱԿԱ>]] ՆՊԱՏԱԿ (փրկագին)]]][12]:

Փաստորեն, հայցի տեքստի ներածական հատվածում զետեղված իրավական տեսանկյունից կարևորություն ունեցող իրադարձությունները պատճառական են: Ընդ որում, այս պատճառական իրադարձությունները որոշ դեպքերում բարդ են և ենթադրում են պատճառի և հետևանքի հարաբերակցություն մի քանի մակարդակներում: Օրինակ՝ *kidnap* բայի իմաստային կառույցից երևում է, որ որոշակի x արգումենտի որոշակի եղանակով (forcefully) կատարված գործողությունը պատճառում է y արգումենտի՝ ինչ-որ իրավիճակում հայտնվելը: Բայց ավելի խորքային դիտարկման դեպքում երևում է, որ գործողության կատարման եղանակը նույնպես ենթադրում է որոշակի պատճառահետևանքային հարաբերակցություն: Այլ կերպ ասած՝ *force* գործողությունը նույնպես ենթադրում է պատճառիչ և պատճառյալ արգումենտների փոխ-հարաբերակցություն.

FORCE: [[x ԳՈՐԾԵԼ: <ՄԻՋՈՑ (ճնշում)>] ՊԱՏՃԱՌԵԼ [y ԱՆԵԼ, ԼԻՆԵԼ]]

---

[9] http://dictionary.findlaw.com/definition/inveigle.html (22.05.2015):

[10] http://thelawdictionary.org/decoy/ (22.05.2015):

[11] http://dictionary.findlaw.com/definition/abduct.html (22.05.2015):

[12] http://www.thefreedictionary.com/kidnap (22.05.2015):

Այս նույն բաղադրատարրը կա նաև *abduct* բայի իմաստային կառույցում, որը քիչ է տարբերվում *force* բայի իմաստային կառույցից: Այս պարագայում հարց է առաջանում, թե որ իմաստային տարրն է կամ բառիմաստի որ կողմն է պայմանավորում բառային տարբերությունը և հատկապես՝ բառիմաստի պատճառական բնույթի բազմաշերտությունը: Բանն այն է, որ վերոբերյալ երկու պատճառական բայերը տարբերվում են դրանցով արտահայտված իրադարձության և իրավական նորմի միջև փոխհարաբերության տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ եթե *force* բայի կառույցից չի երևում իրավազանցման իմաստը, ապա *abduct*-ի պարագայում հանցավորության իմաստն ընդգծված է: Այս հանգամանքն է պայմանավորում բոլոր տեսակի հանցագործությունների բառային արտահայտությունների պատճառական բնույթը. գործողությունը, որը կատարվել է իրական աշխարհում, տեղայնացվում է մեր կողմից առաջարկված աստիճանակարգի վրա, որտեղ իրավական նորմի և եղելության միջև պատճառահետևանքային կապի ստեղծման միջոցով այս կամ այն արարքը համարվում է իրավազանցություն կամ հանցանք:

Եզրակացության մեջ մեկտեղվում են հետազոտության արդյունքները և հետագա գիտական ներուժը, որը բխում է այդ արդյունքներից: Մասնավորապես բացատրվում են դատաիրավական տեքստում պատճառականության բազմակողմանի ուսումնասիրությունների անհրաժեշտությունը և դրա առկայացման բառաքերականական միջոցների իմաստային առանձնահատկություններն ու դրանց գործառութային դաշտը:

- Վիճակի փոփոխություն ցույց տվող որոշ բայերի պրեդի-կատաարգումենտային կառույցում առկա գործիքի արգումենտը պայմանավորում է շնչավոր արտաքին պատճառիչի մասնակցությունը, հետևաբար՝ նաև դիտավորության իմաստը: Այն բայերը, որոնք ցույց են տալիս վիճակի փոփոխություն և ունեն գործիքի, հետևաբար նաև շնչավոր պատճառիչի արգումենտ և դիտավորության ածանցյալ, չեն ենթարկվում պատճառական փոխակարգության:
- Վիճակի փոփոխություն ցույց տվող անհայցական բայերն ինքնին պատճառական են:
- Քրեածին արարքը իրավական նորմին հնարավորինս ճշգրիտ վերագրելու նպատակով պատճառականության կարգը դատա-իրավական տեքստերում քննելի է մակրո- և միկրոհարթության վրա:
- Դատաիրավական կարևորություն ունեցող իրադարձության բառայնացումը պատճառական կապերի առկայացման տեսանկյունից պայմանավորում է տվյալ իրադարձության նկատմամբ հանրային ընկալումը:

- Դատաիրավական նշանակության տեքստում այս-կամ այն լեզվական միավորի նախընտրությունը պայմանավորված է տվյալ լեզվական միավորի իմաստային կառույցում կամ այդ կառույցից բխող պատճառիչ արգումենտի առկայությամբ կամ բացակայությամբ: Գործողության հեղինակին թաքցնելու/բացահայտելու կամ բացառելու/նշանակելու առանձնահատկություննն է, որ կապող օղակ է Օբամայի հեղինակած և դատաիրավական խոսույթում քննելի այլ տեքստերի միջև:
- Դատաիրավական տեքստերում անձնական դերանունները և դրանց վերագրված գործողությունները ներկայացնող պատճառական բայերը խաղարկվում են դատախազի կողմից՝ որպես կողմերի առաջադրած փաստարկի կերտման միջոց, այնինչ մեղադրյալ կողմի բացման ելույթում պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միջոցների սղությունը ծառայեցվում է մեղադրող կողմի առաջադրած փաստարկի աղճատմանը: Պատճառականության կարգի տեքստակառուցողական գործառույթը արտացոլվում է կիրառված բայերի հասկացական կաղապարների վրա:

Աշխատանքում առաջադրված դրույթները արտացոլված են հետևյալ հրատարակումներում՝

1. Одновременность событий как средство актуализации каузальности // Вестник Московского государственного областного гуманитарного института, Серия Филология. Лингвистика и межкультурная коммуникация. N 2 (2014). Орехово-Зуево, 2014. – С. 50-53.
2. Մակրո- և միկրոպատճառականությունը որպես քրեական գործի լեզվական ապակառուցման տարրեր // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի: 1(28) Եր.: Լինգվա, 2013, էջ 86-93.
3. Պատճառականությունը և դատաիրավականության հանրային ընկալումները // Կանթեղ: Գիտական հոդվածներ: 2-3(59-60), Եր.: Աստղիկ, 2014, էջ 145-154:

САНТРОСЯН РАФИК АРТУРОВИЧ

ЛЕКСИКО-ГРАММАТИЧЕСКИЕ СРЕДСТВА АКТУАЛИЗАЦИИ КАТЕГОРИИ КАУЗАТИВНОСТИ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

(на материале судебно-правовых текстов)

Настоящая работа посвящена изучению лексико-грамматических средств актуализации категории каузативности в судебно-правовом дискурсе.

Актуальность работы обусловлена отсутствием в современной лингвистической науке системного подхода к изучению категории каузативности на материале судебно-правовых текстов, а также практической необходимостью пополнения инструментария юрислингвистической экспертизы.

Научная новизна работы заключается в том, что в процессе изучения категории каузативности применяется принципиально новый терминологический глоссарий, который способствует становлению новых подходов к изучению данного языкового явления. В частности, нами вводятся понятия макро- и микрокаузальности, которые обозначают два уровня лексикализации событийности в судебно-правовом дискурсе.

В рамках диссертационной работы предпринята попытка детального лингвосемантического анализа одной из важнейших когнитивных функций каузативности, репрезентирующей различные способы социо-культурных рецепций, функционирующих в поле судебно-правового дискурса. Анализируется роль категории каузативности как детерминирующего фактора речевых стратегий отрицания, при этом особое внимание уделяется связи, наличествующей между каузативностью и нарративизацией топоса подсудимого в судебно-правовом дискурсе.

Теоретическая значимость работы заключается в том, что многообразность полученных данных позволяет по-новому взглянуть на проблему каузативности, переосмыслить и заново сформулировать ряд дефиниций, а также классифицировать средства актуализации каузативности в современном английском языке.

В отличие от подавляющего большинства аналогичных исследований данная диссертационная работа исходит из нескольких теоретических подходов, является попыткой междискурсивного анализа, при этом находится на границе разных дисциплинарных сфер, лингвосемантики и судебного права. Подобная многовекторность исследования определяет его потенциал и **практическую значимость**. Результаты исследования могут быть использованы как в процессе юрислингвистической экспертизы, так и для пополнения его инструментария. С этой точки зрения, выводы исследования могут быть применимы не только в

рамках англоязычного судебно-правового дискурса, но приложены также к аналогичному армяноязычному дискурсу. Освещенные в работе современные теории каузативности и каузативной альтернации, а также новый подход к указанным проблемам, могут быть учтены при составлении учебных курсов по лингвистике, семантике, лингвистической экспертизе, придавая специальной терминологии более высокую степень операциональной функциональности. Семантический анализ глаголов с общим значением «лишение жизни» и связанных с каузативностью грамматических категорий глагола может иметь практическое применение в лексикографии, а также способствовать пересмотру и пополнению существующей терминологической базы судебно-правового дискурса.

RAFIK SANTROSYAN

LEXICO-GRAMMATICAL CAUSATIVES

IN MODERN ENGLISH FORENSIC TEXTS

While the last few decades have witnessed an upsurge of research in causativity, the lexical and grammatical ways of expressing causativity in forensic discourse have not received due attention. Therefore, the present dissertation explores the lexico-grammatical ways of encoding causativity in Modern English (ME) language texts of forensic significance. By analysing grammatically alternating verbs, verbs of deprivation of life in Barack Obama's April 24 speeches as well as in the O. J. Simpson murder trial opening and closing statements, the dissertation studies the role causativity performs as a discursive and narrativization mechanism in forensic discourse. The functionality of causative verbs is discussed through the semantic frame analysis of verbs attributed to variating personal pronouns in murder trial opening and closing statements of both parties. Pronominal variation is thus viewed as a discursive device maneuvered by the prosecutor and the defence attorney.

The **novelty** of the research is determined by the absence of systematic approaches to the research of causativity as a linguistic category in forensic discourse. The novelty is also conditioned by the need to expand the forensic semanticist's toolkit by emphasizing causativity in ME. To further causativity studies in such structurally different languages as English and Armenian, the dissertation offers a glossary of terms that are either newly coined or reconsidered in the Armenian language. Specifically, the notions of macro- and micro-causation are introduced as two levels of event lexicalization in forensic discourse.

Furthermore, the research aims to explain one of the cognitive functions of causativity and how it shapes public approaches to the law and lawfulness. One of the cognitive functions of causativity is examined as a quality underlying the discursive mechanisms of denialism. Another is examined as a narrativization device maneuvered by either the prosecutor or the defence attorney during court hearings.

The **theoretical significance** of the study hinges on the complexity of the acquired data that allow assessing, interpreting, redefining and classifying the ways of expressing causativity in ME.

The **methodological** toolkit involves analyses of predicate-argument structures and semantic frames of verbs of deprivation of life that are causative in nature or can be contextualized as such.

The main **applied value** of the dissertation is that its arguments bridge linguosemantics and forensic linguistics through an interdisciplinary framework.

The research data in this dissertation can be used in the forensic linguistic analysis of criminal cases universally. In this regard, this research is applicable not only in the forensic discourse in English but also in the legal system of the Republic of Armenia (RA). Semantic frame and predicate-argument structure analyses of verbs denoting deprivation of life can have applied value in lexicography and forensic terminology. This research should have impact as part of theoretical and practical courses in semantics, theory of grammar, discourse studies, and forensic linguistics.